

## Ինքնաձիգի կիսաազատ փակադակ

Գյուտը վերաբերում է ինքնաձիգի մաս կազմող կիսաազատ փակադակներին եւ կարող է կիրառվել այն դեպքերում, երբ ինքնաձիգի փողը անշարժ ամրակցված է իրանին:

Հայտնի է կիսաազատ փակադակ, որը կազմված է առջեւի եւ հետին մասերից եւ նրանց հետ համագործակցող արագացուցիչից: Արագացուցիչը հողավոր է եւ ունի կարճ եւ երկար լծակներ, ընդ որում կարճ լծակով նա համագործակցում է փակադակի առջեւի մասի հետ, իսկ երկար լծակով՝ հետին մասի հետ [1]:

Հայտնի փակադակի թերությունը կառուցվածքի բարդության մեջ է, մասնավորապես՝ այն ունի արագացուցիչի հողի սռնի, ինչը բացի կառուցվածքը բարդացնելուց նաեւ դժվարացնում է փակադակի հավաքումն ու քանդումը:

Գյուտի խնդիրն է փակադակի կառուցվածքի պարզեցումը:

Գյուտի էությունը կայանում է նրանում, որ լծակային արագացուցիչը ազատ տեղադրված է փակադակի մարտական բնիկի թիկունքում գտնվող եւ առջեւի ու հետին մասերի հանդիպակած ճակատներով կազմված շառավղային խոռոչում եւ ունի իրանից կառչվելու կոր ժանիք:

Գյուտի էությունը պարզաբանվում է գծագրերով, որտեղ նկ. 1-ում պատկերված է փակադակի երկայնական կտրվածքը փամփուշտակալի մուտքը փակած դիրքում, իսկ նկ. 2-ում՝ բացած դիրքում:

Փակադակը կազմված է առջեւի (1) եւ հետին (2) մասերից եւ լծակային արագացուցիչից (3): Արագացուցիչը ազատ տեղադրված է փակադակի մարտական բնիկի թիկունքում գտնվող եւ առջեւի (1) ու հետին (2) մասերի հանդիպակած ճակատներով կազմված շառավղային խոռոչում: Արագացուցիչի կոր ժանիքը կառչված է իրանից (4), որն ամրակցված է փողին (5): Փակադակի առջեւի (1) եւ հետին (2) մասերը իրար հետ ամրակցված են հանովի վերալիցքավորման բռնակի (6) միջոցով, ընդ որում առջեւի մասի առանցքային անցքում տեղակայված է զարկանը (7): Փակադակն ունի նաեւ կրակված պարկուճների բեկանիչ (8): Փակադակի հետին մասի բնիկում տեղակայված է հետադարձ զսպանակը (9): Փակադակը տեղադրված է ինքնաձիգի փակադակային տուփի մեջ (10):

Փակադակն աշխատում է հետևյալ կերպ:

Գազերի ճնշման տակ կրակված պարկուճը, սահելով մոտ 1մմ հետ, հետադարձ ուժ է հաղորդում արագացուցիչին (3), որը պտտվելով 90 աստիճան, անջատում է փակադակը իրանից (4): Արագացուցիչը իր երկար լծակի ծայրով հրում

է փակաղակի հետին մասին (2), որը ստանալով արագություն, իր հետ դեպի հետ է քաշում փակաղակի առջեւի մասը (1), արտանետելով կրակված պարկուճները աջ կողմից բեկանիչի (8) օգնությամբ 45 աստիճան անկյան տակ: Յետադարձի զսպանակի (9) օգնությամբ փակաղակը վերադարձնում է իր նախկին դիրքը՝ իր հետ տանելով հերթական փամփուշտը եւ փակելով փամփուշտակալի մուտքը:

Տեղեկատվության աղբյուր՝

[1] “Материальная часть стрелкового оружия”(под ред. А. А. Благонравова), Москва 1945, стр. 44-45

## Հավակնության սահմանում

Ինքնաձիգի կիսաազատ փակադակ, որն ունի երկու՝ առջեւի եւ հետին մասեր, դրանց հետ փոխազդող լծակային արագացուցիչ եւ մարտական բնիկ. *տարբերվում է նրանով*, որ արագացուցիչը ազատ տեղավորված է փակադակի մարտական բնիկի թիկունքում գտնվող եւ փակադակի առջեւի ու հետին մասերի հանդիպակած ճակատներով կազմված շառավղային խոռոչում եւ ունի ինքնաձիգի իրանից կառչվելու կոր ժանիք:

**Նկարագրությունը վերարտադրված է հայտատուի ներկայացրած տեքստից:**

